ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/226

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Մասնակից՝ «Արինա Պողոյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89-3»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14496-2020 գրությամբ «Արինա Պողոյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 22.09.2020թ. թիվ 08.1//25270-2020 գրության հիման վրա, 24.09.2020թ.-ին «Արինա Պողոյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 24.09.2020թ.-ին:

25.09.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/226 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

02.10.2020թ.-ին և 16.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 02.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.10.2020թ.-ին:

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 22.09.2020թ. թիվ 08.1//25270-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է հետևյալը.

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Արինա Պողոյան» Ա/Ձ-ի միջև կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետը, 05.08.2020թ կնքվել է N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89-3 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, «Արինա Պողոյան» Ա/Ձ-ին 24.08.2020թ ներկայացվել է կնքված Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր կնքելու առաջարկ, որը ըստ Պայմանագրի 8.13 կետի կարող էր կնքվել, եթե փուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված ժամկետում (մինչև

14.09.2020թ ներառյալ) փոխարինվեին նոր ապահովումներով՝ բանկային երաշխիքի ձևով: Սակայն մինչև սահմանված ժամկետի ավարտը «Արինա Պողոյան» Ա/Ձ-ի կողմից որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքով չեն փոխարինվել:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 8.13 կետը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը միակողմանի լուծել է «Արինա Պողոյան» Ա/Ձ-ի հետ 05.08.2020թ կնքված թիվ N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89-3 գնման պայմանագիրը, ինչի մասին ծանուցումը 17.09.2020թ. հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում: Պայմանագիրն միակողմանի լուծելու մասին ծանուցումը ուղարկվել է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ստորև ներկայացնում եմ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը, կնքված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները, համաձայնագիր կնքելու առաջարկի ծանուցումը:

Խնդրում եմ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա) մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում հաշվառել տեղեկատվությունը՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արինա Պողոյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արինա Պողոյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 25.09.2020թ.-ի գրությամբ դիմել է «Արինա Պողոյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14496-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում՝ չներկայանալով նաև հրավիրված նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2020/226 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Արինա Պողոյան» Ա/Ձ-ի միջև 05.08.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89-3» ծածկագրերով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարուման ժամկետի սկիզբ է համարվում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում տվյալ աշխատանքների մասով կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 70-րդ օրացուցային օրը ներառյալ:

iii. Պատվիրատուն 24.08.2020թ.-ին թիվ 04//23068-2020 գրությամբ ներկայացված ծանուցմամբ «Արինա Պողոյան» Ա/Ձ-ին ուղարկել է թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք համաձայնագրի նախագիծը:

Միաժամանակ Պատվիրատուն Մասնակցին հայտնել է, որ ծանուցումը և համաձայնագրի նախագիծը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը պետք է ներկայացնել «Արինա Պողոյան» Ա/Ձ-ի կողմից կնքված համաձայնագրի 2 օրինակը և բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով փոխարինված՝ նախկինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները:

iv. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Արինա Պողոյան» Ա/Ձ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

v. Պատվիրատուն 16.09.2020թ.-ին թիվ 08.1//24980-2020 գրությամբ Մասնակցին հայտնել է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Արինա Պողոյան» Ա/Ձ-ի միջև կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետը, 05.08.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-

20/89-3» ծածկագրով գնման պայմանագիրը: Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո Մասնակցին 24.08.2020թ.-ին ներկայացվել է կնքված Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր կնքելու առաջարկ, որը ըստ Պայմանագրի 8.13-րդ կետի կարող է կնքվել, եթե տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված ժամկետում (մինչև 14.09.2020թ.-ը ներառյալ) փոխարինվեին նոր ապահովումներով՝ բանկային երաշքիքի ձևով: Սակայն մինչև սահմանված ժամկետի ավարտը որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքով չեն փոխարինվել, ուստի Պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված:

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 17.09.2020թ.-ին հրապարակված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Արինա Պողոյան» Ա/Ձ-ի միջև 05.08.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89-3» ծածկագրով պետական գնման պայմանագրերը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 8.13-րդ կետի ուժով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14496-2020 գրությամբ «Արինա Պողոյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը

կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ

իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 1.3-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը և կատարման ժամկետը սահմանվում է այդ օրվանից 70-րդ օրացույցային օրը ներառյալ:

Պայմանագրի 3.1.4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե՝

ա) կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) կապալառուն խախտել է պայմանագրի 1.3-րդ կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3-րդ կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Արինա Պողոյան» Ա/Ձ-ի միջև 05.08.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89-3» ծածկագրերով պետական գնման պայմանագրի հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարուման ժամկետի սկիզբ է համարվում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում տվյալ աշխատանքների մասով կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 70-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պատվիրատուն 24.08.2020թ.-ին թիվ 04//23068-2020 գրությամբ ներկայացված ծանուցմամբ «Արինա Պողոյան» Ա/Ձ-ին ուղարկել է թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք համաձայնագրի նախագիծը և հայտնել է, որ ծանուցումը և համաձայնագրի նախագիծը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը պետք է ներկայացնել «Արինա Պողոյան» Ա/Ձ-ի կողմից կնքված համաձայնագրի 2 օրինակը և բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով փոխարինված՝ նախկինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները: Սակայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Արինա Պողոյան» Ա/Ձ-ի միջև համաձայնագիր չի կնքվել, ինչ մասին Պատվիրատուն 16.09.2020թ.-ին թիվ 08.1//24980-2020 գրությամբ հայտնել է Մասնակցին:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 17.09.2020թ.-ին հրապարակված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Արինա Պողոյան» Ա/Ձ-ի միջև 05.08.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89-3» ծածկագրով պետական գնման պայմանագրերը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և

սպորտի նախարարության կողմից միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 8.13-րդ կետի ուժով:

Վերոգրյալ իրավանորմերի՝ գործով հաստատված փաստերի հետ միասին գնահատման և համալիր վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ տվյալ դեպքում, «Արինա Պողոյան» Ա/Ձ-ի կողմից դրսևորած անգործության՝ թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք համաձայնագրի նախագիծը չկնքելու և չներկայացնելու արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, 17.09.2020թ.-ին միակողմանի լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում նույն օրը հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, «Արինա Պողոյան» Ա/Ձ-ն խախտել է պայմանագրով

նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14496-2020 գրությամբ «Արինա Պողոյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/226 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արինա Պողոյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ